# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ

Վերանոր. 1922

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ
2026 թ.
№ 14 (1169)

*Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին*
*Երկշաբաթաթերթ ● հրատարակման 61-րդ տարի*

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍԻՐԵԼԻ՛ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ, ԴԱՍԱԽՈՍՆԵՐ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ, ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Այսօր մենք նշում ենք Հայաստանի Հանրապետության անկախության 35-ամյակը:

Անկախությունը միայն մեր պետության անցած ճանապարհի կարևորագույն հանգրվանը չէ: Այն ամեն օր մեր ընտրությունների, աշխատանքի, պատասխանատվության և ապագայի նկատմամբ մեր վերաբերմունքի մասին է:

Որպես մանկավարժական համալսարան՝ մենք առանձնահատուկ պատասխանատվություն ունենք այս ճանապարհին, որովհետև անկախ Հայաստանի ապագան ձևավորվում է նաև լսարաններում, դպրոցներում, ուսուցչի և աշակերտի հանդիպման պահին: Մենք պարտավոր ենք կրթել սերունդ, որը գիտի իր պատմությունը, արժևորում է իր պետությունը, մտածում է քննադատաբար, հարգում է իր և մյուսների իրավունքները և պատրաստ է իր գիտելիքն ու կարողությունները ծառայեցնել Հայաստանի զարգացմանը:

Ուժեղ պետությունը սկսվում է կրթված, պատասխանատու և արժանապատիվ քաղաքացուց:

Այսօր՝ անկախության 35-րդ տարեդարձին, մաղթում եմ մեր երկրին խաղաղություն, կայունություն, զարգացում և միասնականություն, իսկ յուրաքանչյուրիս՝ հավատ ու ամենօրյա աշխատանք՝ հանուն ավելի ուժեղ Հայաստանի:

Թող մեր անկախությունը ոչ միայն պահպանվի, այլև ամրապնդվի՝ գիտելիքով, կրթությամբ, աշխատանքով և պատասխանատվությամբ:

Շնորհավոր Հայաստանի Հանրապետության Անկախության 35-րդ տարեդարձը:

***Լիլիթ Մկրտչյան***
***ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար***

## ԸՆԴԼԱՅՆՎՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԶՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ

Մանկավարժական համալսարանում սեպտեմբերի 11-ին հյուրընկալվել էին Բեյրութի Հայկազյան համալսարանի նախագահ, դոկտոր, վերապատվելի Փոլ Հայդոսթյանը և Հայկական սփյուռքի գիտական կենտրոնի տնօրեն, դոկտոր Անդրանիկ Տագեսյանը:

Լիլիթ Մկրտչյանը խոսեց կրթության ասպարեզի բարեփոխումներում Մանկավարժականի առանցքային դերի մասին, ընդգծեց, որ երկու կողմերի առաքելությունն էլ նույն է՝ թե՛ ինքնության պահպանման ու փոխանցման, թե՛ հասարակությունը կրթելու և առաջ տանելու տեսանկյունից:

Բեյրութի Հայկազյան համալսարանի նախագահ, դոկտոր, վերապատվելի Փոլ Հայդոսթյանը կարևորեց ՀՊՄՀ Պատմության և հասարակության ֆակուլտետի հետ արդեն տարիներով ձևավորված սահուն համագործակցությունը, որի շարունակականությունն արժանացավ Լիլիթ Մկրտչյանի հավանությանը: Վերջինս Հայկազյան համալսարանի հետ ձևավորված համագործակցությունը դիտարկեց նոր գիտակրթական նախաձեռնությունների իրականացման տեսլականում, որը կիրականացվի երկու հաստատությունների միջև կնքված հուշագրի շրջանակներում որպես շարունակություն արդեն իսկ կազմակերպված մի շարք համատեղ գիտակաժողովների ու գիտական հրատարակությունների:

Քննարկման ընթացքում խոսակցություն ծավալվեց հայի ինքնության հարցերի, հատկապես սփյուռքում հայ երիտասարդների դասավանդման ու դաստիարակության խնդիրների ու մտահոգությունների շուրջ:

Դոկտոր, վերապատվելի Փոլ Հայդոսթյանը իր մտահոգություններն արտահայտեց տարբեր հարցերի շուրջ՝ նկատելով, որ սոցիալական հարթակներում յուրաքանչյուրն իր տեսանկյունից է ձևակերպում «Սփյուռք» հասկացությունն ու նրա մասին պատկերացումները, մինչդեռ պետք է գիտակցել, որ հայրենիքից դուրս ինքնաճանաչողության խորքային խնդիր ունենք, և, անշու՛շտ, պետք է մեկ կողմ թողնել սփյուռքում առկա կուսակցությունների ամեն տեսակ տարակարծությունները:

Այդ համատեքստում Հայկազյան համալսարանի ռեկտորը կարևորեց Մանկավարժական համալսարանի հետ համագործակցության տարբեր ձևաչափերը՝ ընդգծելով մանկավարժական կադրեր պատրաստող բուհի առանցքային դերն ու ռազմավարական նշանակությունը: Այդ տեսանկյունից նաև Մանկավարժականում դասավանդող «հայկազյանների» մասնագիտական գործունեությամբ են օրեցօր ամրապնդվում երկու հաստատությունների համագործակցային կապերը:

«Եթե մենք մեր զավակներին չդաստիարակենք, ուրիշները դա կանեն մեր փոխարեն»,- վստահեցրեց ռեկտորը՝ մեկ անգամ ևս կարևորելով հայեցի կրթությունը, հայոց լեզվի ու պատմության դասավանդման անհրաժեշտությունը՝ որպես անվտանգային խնդիրներ:

***Սիլվա Ասրյան***

# Անդրադարձան փոխակերպվող աշխարհի գործընթացներին և իրողություններին

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ-ԳԻՏԱԺՈՂՈՎ**

Մանկավարժական համալսարանում սեպտեմբերի 14-ին Բեյրութի Հայկազյան համալսարանի (Լիբանան) հետ համատեղ կազմակերպված գիտաժողով-աշխատաժողովն անցկացվեց «Փոխակերպվող աշխարհ. գործընթացներ և իրողութիւններ» խորագրով: Զեկուցումները ներկայացվեցին «Հայ մշակույթ և ինքնություն», «Պետականություն և Սփյուռք», «Ազգային գաղափարախոսություն», «Հայաշխարհ և համաշխարհայնացում» թեմաների ներքո՝ ամենն ամփոփելով ակտիվ քննարկումներով: Հետաքրքիր ու արդի հիմնախնդիրների քննարկմանը մասնակցում էին Հայաստանի, Սփյուռքի և տարբեր երկրների գիտնականներ՝ պատմաբաններ, հայագետներ, այլ մասնագետներ:

Նիստը վարում էր ՀՊՄՀ Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը, որն իր ներածական խոսքում ներկայացրեց գիտաժողովի անցկացման կարևորությունն ու միտումները:

Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիլիթ Մկրտչյանը, Բեյրութի Հայկազյան համալսարանի նախագահ, վերապատվելի դոկտոր Փոլ Հայտոսթյանը, Հայկական Սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն, դոկտոր Անդրանիկ Տագեսյանը, ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Էդգար Հովհաննիսյանը:

«Ինքնության պահպանումը ոչ միայն ժամանակի հարց է, երբ մենք խոսում ենք և պահպանում ենք անցյալը, այլև կարողանում ենք այդ ժառանգությունը դարձնել ներկայի և ապագայի կենդանի մաս,-ասաց Լիլիթ Մկրտչյանը՝ ընդգծելով, որ հենց այդտեղ է կրթության դերը, և որ կրթությունը միայն գիտելիքի փոխանցման գործընթաց չէ, կրթությունը այն տարածքն է, որտեղ ձևավորվում է մարդու կապը իր պատմության, մշակույթի, պետության և հասարակության հետ:

Ռեկտորի պաշտոնակատարը փաստեց Մանկավարժականի համար այդ պատասխանատվության առավել առանձնահատուկ լինելը, քանզի այստեղ պատրաստում են ոչ միայն մասնագետներ, այլև մարդկանց, որոնք վաղը կրթելու են երեխաներին և ձևավորելու են նրանց արժեհամակարգը: Հետևաբար հայաշխարհի փոխակերպումների մասին խոսելիս չպետք է շրջանցել կրթությունը: Եվ որպեսզի կրթությունը լինի կենսունակ ոչ միայն հիշողության մակարդակում, պետք է մտածել՝ ինչ կրթություն ենք տալիս հաջորդ սերնդին, ինչպիսի հայ ենք ուզում ձևավորել:

Բանախոսը աշխարհի նկատմամբ բաց լինելը և հայկական ինքնությունը դիտարկեց մեկ հարթության վրա՝ առանց ինքնությունը կորցնելու, առանց վախերի: Դրանցով էլ պայմանավորեց գիտաժողովի կարևորությունը՝ մտածելու, հասկանալու հայաշխարհի ներկա վիճակը, փոփոխությունների ուղղություններն ու ապագայի հնարավորությունները:

Լիլիթ Մկրտչյանն առանձնահատուկ ընդգծեց Հայկազյան համալսարանի ռեկտորի և գործընկերների, աշխարհի տարբեր համալսարանների հայագետների ներկա լինելու հանգամանքը՝ որպես Հայաստանի և Սփյուռքի գիտակրթական ներուժը մեկ ընդհանուր տարածքում միավորելու հնարավորություն: Նա անդրադարձավ Հայկազյան համալսարանի տասնամյակների գործունեությանը՝ Սփյուռքի հայ գիտական, կրթական, մշակութային կյանքի պահպանման ու զարգացման գործում, հավելելով, որ Մանկավարժական համալսարանի առաքելությունն է նոր սերնդի մասնագետների պատրաստումը, և այս համատեքստում երկուսի փորձառությունները կարող են միմյանց լրացնել, երկուստեք միասին քննարկել, թե այսօր ինչ կրթություն է պետք Հայաստանի և աշխարհի տարբեր երկրների հայ երիտասարդներին:

Լիլիթ Մկրտչյանը հանգամանորեն ներկայացրեց՝ ինչ համագործակցություն է պատկերացնում Բեյրութի Հայկազյան համալսարանի հետ՝ վստահեցնելով, որ համատեղ կարող են քննարկել նոր հարցեր, որոնց պատասխաններն անգամ չգիտեն: Ռեկտորի պաշտոնակատարը վստահեցրեց՝ այս համագործակցության շարունակականությունը կարող է վերածվել երկկողմ գործընկերության, միաժամանակ հայկական ակադեմիական ցանցի հիմք կարող է դառնալ:

Լիլիթ Մկրտչյանը հույս հայտնեց՝ ներկա հանդիպումից կծնվեն ծրագրեր, հետազոտություններ, գործընկերներ և նոր հնարավորություններ մեր երիտասարդների համար, որովհետև ամենակարևոր հարցն այն է, թե ինչ հայկական աշխարհ ենք թողնելու հաջորդ սերնդին:

«Սա չորս տարվա մեջ երրորդ գիտաժողովն է Մանկավարժական համալսարանի հետ,-ասաց Հայկազյան համալսարանի նախագահ, վերապատվելի դոկտոր Փոլ Հայտոսթյանը»: Նա փաստեց, որ երկար են քննարկել, թե ինչ օրակարգի շուրջ կազմակերպեն գիտաժողովը, և հստակեցրել են թեմաները՝ ինչ է հայաշխարհը՝ Սփյուռք, Հայրենիք, ինչ են հայաշխարհի սահմանները՝ աշխարհագրական, պատմական, մշակութային, պաշտոնական, հոգեկան, կրոնական, թվային..., ինչպիսի ուժեր պիտի փոխեն մեր աշխարհը՝ ազգային պատկանելություն, աստվածաբանություն, կրթություն, պետականություն, ինչու չէ, նաև սփյուռքագիտություն:

Բանախոսը փաստեց՝ Հայկազյան համալսարանն իր գոյությամբ իսկ վկայում է, թե կրթությունը կամուրջ է աշխարհների միջև Հայկազյան համալսարանն ստեղծվել է Բեյրութում, հայկական համայնքում, Սփյուռքի պայմաններում, բայց իր առաքելությունը միայն համայնքով չի սահմանափակվում: Կրթությունը կարող է կամուրջ դառնալ տարբեր աշխարհների միջև. Հայկազյան համալսարանը փորձում է ստեղծել լայն միջավայր, ուր հայկական փորձառությունը, լիբանանյան բազմազան հասարակությունը և համաշխարհային գիտական աշխարհը կարողանում են հանդիպել նույնիսկ ռմբակոծությունների ներքո: Համալսարանի նախագահը վստահեցրեց, որ այդ հանդիպումներում անդրադառնում են նոր սերնդի կադրերի պատրաստությանն ու նրանց հավասարակշված զարգացմանը:

«Գիտաժողովի ընթացքում պետք է փորձենք հասկանալ փոփոխությունների խորքային պատճառները»,-ասաց նա՝ ցավով նկատելով, որ վերջին տարիների ընթացքում հայության շրջանում նկատել է անջատվածություն: Նա հույս հայտնեց, որ գիտաժողովի և նրանից դուրս աշխատանքը կծառայի հասկանալու հայաշխարհը, որպեսզի կարողանան ավելի մեծ պատասխանատվությամբ մասնակցել ապագայի կերտմանը:

Դոկտոր Անդրանիկ Տագեսյանն անդրադարձավ հայագիտության կարևոր խնդիրներին, հայագիտության հանրայնացմանը և դրանց արդյունքներին պատկան մարմինների արձագանքին թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում:

Նա խոսեց գիտաժողովի մասին, որտեղ հավաքվել են հայագետ մասնագետներ տարբեր երկրներից, ինչը նշանակում է նաև բազմակարծության առկայություն, փորձառությունների միատեղում: Նա խոսեց Մանկավարժական համալսարանի հետ գիտաժողովների անցկացման մշակույթի ձևավորման մասին:

Դոկտորը վստահեցրեց, որ զեկուցողները կկարողանան ներկայացվող հարցի ընթացքը կապել ներկայի հետ, միաժամանակ լուծումներ առաջարկել:

«Պատմությունն անընդհատ փոխակերպումների շղթա է, և գլխավոր հարցն է՝ որ փոխակերպումն է մեզ տանելու դրական ճանապարհով, և հակառակը՝ որոնց պետք է ընդդիմանալ: Այս երկուսի կենտրոնում է գտնվում մեր ինքնապահպանման և առաջ գնալու բանաձևը: Եթե մեզ հաջողվի գտնել այդ բանաձևը՝ փորձելով գիտագործնական գաղափարներ առաջադրել, գիտաժողովը կհամարենք կայացած»,-ասաց Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը:

Դեկանը նկատեց՝ կազմակերպման տեսանկյունից այս գիտաժողովն իր նախադեպը չունի. ընտրել են 4 թեմա, յուրաքանչյուր թեմայի շուրջ՝ 2 զեկուցող, և ոչ միայն պատմաբաններ: Նրանք 30-40 րոպեի ընթացքում փորձելու են հիմնախնդրի խորքը հասկանալ, միջառարկայական, միջկրթական մոտեցումներ ցուցաբերել:

Էդգար Հովհաննիսյանը վստահեցրեց՝ սա ոչ թե նախորդ գիտաժողովների տրամաբանական ամփոփումն է, այլ ապագայի շարունակությունը՝ նոր երկխոսության հարթակ, նոր մտածումներ ու նոր սկիզբ հայկական Սփյուռքում միակ համալսարանի հետ մեր հարաբերություններում:

Ներկաները «Հայ մշակույթ և ինքնություն» խորագրի ներքո առցանց լսեցին ամերիկաբնակ, Կալիֆորնիայի սուդեռն համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Հրակ Փափազյանին՝ «Ո՞վ է հայը. հարցադրումների հետքերով» խորագրով ուսումնասիրությունը հատկապես պոլսահայ և այլ հայկական միջավայրերում:

«Ո՞վ է հայը» հարցադրումին զեկուցողը մոտեցավ Պոլսում կատարած հետազոտությունների միջոցով, հարց, որ նոր թափ է ստացել 21-րդ դարում՝ բախվելով յուրահատուկ այլազանությունների.կրոններ, քաղաքացիություն, «հայրենիք». այստեղ ի հայտ են գալիս, տարբերակող ու զանազանող, երբեմն էլ բաժանող գծերը:

«Հայ քրիստոնյա, մահմեդական հայ, թուրքիացի հայ, հայ, հայաստանցի հայ... Սփյուռքահայ, թե՞ ոչ». զեկուցողի մտահոգությունները տանում են դեպի այս թիրախային հարցերի քննարկումներ, որոնք ավարտվում են ընդհանրացումներով:

«Պետականություն և Սփյուռք» բաժնում զեկուցումով հանդես եկավ փիպիսոփայության դոկտոր, դոցենտ Աշոտ Ոսկանյանը: Նրա զեկուցումը վերաբերում էր Պետություն-Սփյուռք համատեքստում Սփյուռքի ճգնաժամին և հեռանկարներին:

Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց Սփյուռքի նկատմամբ Խորհրդային Հայաստանի վարած համակարգված քաղաքականությունը, երրորդ հանրապետության հաստատումից ի վեր սփյուռքահայերի ելումուտի ազատականացման պայմաններում անգամ հարաբերությունների հակասականությունը, 2018-ի հեղափոխությունից հետո էլ Սփյուռքի հետ շարունակվող, բայց սահմանափակ նեղ ծրագրի շրջանակներում շարունակվող ճգնաժամը:

«Ճգնաժամի հաղթահարումը հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե դրանում շահագրգռված լինեն երկու կողմերը: Իրական փոխըմբռնման հասնելու համար կպահանջվի նպատակների համաձայնեցումև երկուստեք փոփոխելու կամք»,-եզրափակեց Աշոտ Ոսկանյանը:

Աշխատաժողովն ընթացավ հագեցած օրակարգով. «Հայ մշակույթ և ինքնություն», «Պետականություն և Սփյուռք», «Ազգային գաղափարախոսություն», «Հայաշխարհ և համաշխարհայնացում» խորագրերի համատեքստում հայագետների ու պատմաբանների զեկուցումներում բարձրացված հարցերն ու մտահոգությունները խորքային քննարկումների միջավայր ստեղծեցին՝ ընդհանրական եզրահանգումների մեջ փորձելով ժամանակակից լուծումներ գտնել:

***Սիլվա Ասրյան***

# ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Մանկավարժական համալսարանի ուսումնական տարվա առաջին Գիտական խորհրդի նիստը կայացավ սեպտեմբերի 18-ին:

Նիստը նախագահող ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը, օրակարգի հարցերին անցնելուց առաջ, նախ շնորհավորեց բուհի հոբելյարներին՝ նրանց մաղթելով գիտակրթական գործունեության շարունակական ընթացք և նոր հաջողություններ ընտանիքում և աշխատանքում:

Օրակարգային հարցերից առաջինը երեք ֆակուլտետների դեկանների ընտրության հարցն էր:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկանի պաշտոնում առաջադրվել էին հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտներ Մարիաննա Ավետիսյանը, Լիդա Արամյանը և Լիլիթ Լաչինյանը, Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկանի պաշտոնում՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտներ Արմինե Դալլաքյանը և Գագիկ Հայրապետյանը, իսկ Կուլտուրայի ֆակուլտետի դեկանի պաշտոնի համար ներկայացված էր պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արման Մարտիրոսյանը:

Գիտական խորհրդին կից Մշակութային և Հումանիտար մասնագիտությունների գծով հանձնաժողովների նախագահներ Գևորգ Թադևոսյանն ու Ալիտա Դոլուխանյանը հանգամանորեն ներկայացրին թեկնածուներին ու նրանց գիտամանկավարժական գործունեությունը, նաև անդրադարձ արեցին թեկնածուների աշխատանքային ձեռքբերումներին ու հաջողություններին:

Այնուհետև դեկանի պաշտոնի թեկնածուները Գիտական խորհրդի անդամներին ներկայացրին ֆակուլտետների զարգացման իրենց ռազմավարական ծրագրերն ու տեսլականը, պատասխանեցին խորհրդի անդամների հարցերին:

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքում Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան ընտրվեց Լիդա Արամյանը, Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան՝ Գագիկ Հայրապետյանը, իսկ Կուլտուրայի ֆակուլտետի դեկան՝ Արման Մարտիրոսյանը:

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը շնորհավորեց նորընտիր դեկաններին՝ մաղթելով բեղուն գործունեություն ու աշխատանքային ընթացք՝ հույս հայտնելով, որ նրանց գործունեության հիմքում կլինեն հանրակրթության պետական չափորոշիչն ու առարկայական ծրագրերը՝ որպես բուհական կրթության և հանրակրթության միջև կապի դրսևորում:

Գիտական քարտուղար Հակոբ Թադևոսյանը Գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեց 2026-2027 ուստարվա աշխատանքների ծրագիրը, իսկ Գիտության հարցերով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը՝ «Նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլի» 20 կրեդիտ ծրագրով կրթական ծառայությունների կազմակերպման և իրականացման կարգ»-ի նոր խմբագրությունը:

Խորհուրդը հաստատեց վերոհիշյալ ծրագիրն ու խմբագրված նոր կարգը:

Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը քննարկման ներկայացրեց ամբիոնների վերանվանման և միավորման մասին հարցը, որի առնչությամբ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը ընդգծեց կառուցվածքային փոփոխությունների անհրաժեշտությունը անցումային փուլումի համատեքստում:

Գիտական նիստն ամփոփվեց ընթացիկ հարցերի քննարկումով:

# ԵՐԿՕՐՅԱ ՍԵՄԻՆԱՐ-ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ. «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԳԵՐՈՒՄ»

Ինչպե՞ս «Պատմություն» առարկան դարձնել առավել հետաքրքիր ու գրավիչ. այդ նպատակով Հայագիտական հետազոտությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ և Մանկավարժական համալսարանի նախաձեռնությամբ կազմակերպվեց «Պատմությունը երգերում» խորագրով երկօրյա թեմատիկ սեմինար-վերապատրաստում առարկան դասավանդող ուսուցիչների և ապագա պատմաբանների համար:

Ինչպես նշեց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը՝ կան բազմաթիվ թեմաներ, որոնք կարիք ունեն լրացուցիչ տեղեկատվության. դրանցից մեկն է պատմական տարբեր ժամանակաշրջաններում ստեղծված երգերի ազդեցությունը սերունդների դաստիարակության վրա:

Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ երգի աղբյուրագիտական արժեքի, պատմագիտական շերտերի մասին տեղեկատվությունը անհրաժեշտ է ուսուցիչներին՝ դասի ընթացքում երգերի մասին ավելի հստակ տեղեկություններ փոխանցելու համար: Շատ կարևոր է նաև այդ երգերի երաժշտական արժեքի իմացությունը, հոգեբանական, մանկավարժական արժեքի դիտարկումը, որն անշուշտ կօգնի ուսուցչին դասավանդման ընթացքում:

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանն առանձնահատուկ կարևորեց երկօրյա վերապատրաստումը մեր համալսարանում, որտեղ պատրաստում են ոչ միայն պատմաբաններ և մասնագետներ, այլև ուսուցիչ պատմաբաններ, որոնք գիտեն՝ ինչպես դասավանդել պատմությունը, ինչպես հետաքրքրություն առաջացնել աշակերտների մեջ:

Նա վերապատրաստումը դիտարկեց որպես երկխոսության, շփումների հարթակ՝ գործող և ապագա ուսուցիչների միջև, ապա կարևորեց թեման, որը դուրս գալով ավանդական կաղապարից, փաստելու է՝ պատմությունը ոչ միայն տեքստ է, քար է, պատմությունը նաև երգ է:

Լիլիթ Մկրտչյանը ծրագրի նախաձեռնությունը ողջունեց պատմությանը նոր մեթոդաբանությամբ և ժամանակակից մտածողությամբ անդրադարձ անելու տեսանկյունից՝ հասկանալու ինչպես է երգը փոխանցում ժամանակաշրջանի պատմությունը, նաև հավելեց՝ քաղաքական պատմությունն ուսումնասիրելուց զատ շատ կարևոր է ուսումնասիրել տնտեսական, մշակութային ու հասարակական պատմությունը՝ թերևս ամենաթույլ օղակը համարելով վերջինիս ուսումնասիրությունը:

Պատմությունը ոչ միայն թագավորների, այլև հասարակ մարդկանց մասին է. հետևաբար պետք է պատմության տարբեր շերտերն ուսումնասիրելիս հասկանալ ռամիկի ու շիմարարի, կոլտնտեսականի ու մյուսների ստեղծած ու կատարած երգերի էությունն ու բովանդակությունը ըստ պատմության այս կամ այն շրջանի:

Լիլիթ Մկրտչյանն իր խոսքն ամփոփեց՝ անդրադարձ անելով հանրկրթական չափորոշչին ու ծրագրին, որոնց հիմքում գաղափարների ու հարցադրումների վրա հիմնված ուսումնառությունն է, երևույթներին քննադատաբար նայելու և վերլուծելու հմտությունը, մաղթելով, որ կարողունակահեն կրթության զարգացման ինչ-որ չափով յուրաքանչյուրը հեռանա համալսարանից՝ անպայման օգտագործելու նպատակով:

«Պատմությունը միայն գրքային տեքստերը չեն, պատմությունը աղբյուրներին ծանոթանալն է և այն այլընտրանքային միջոցները, որոնք հնարավորություն կտան ժամանակաշրջանի ոգին զգալ: Դրանցից է երգը»,- ասաց Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը:

Դեկանն ընդգծեց՝ կրթության ոչ ֆորմալ ձևաչափը նպաստում է մասնագիտական կարողությունների, հմտությունների ու գիտելիքների ամբողջացմանը. այս առումով ներկա սեմինարների շարքը այս պահին աշխատող ուսուցչին օգնելու է՝ ստեղծելով լրացուցիչ միջավայր: Վերջինս ընդգծեց սեմինարի միջառարկայական և միջֆակուլտետային, նախագծային ձևաչափը, գիտագործնական ու կիրառական նշանակությունը՝ շեշտելով՝ համալսարանի երաժիշտ ու մանկավարժ դասախոսները երկու օր իրենց դասախոսություններով նոր ու արդի գիտելիքներ կփոխանցեն վերապատրաստվող ուսուցիչներին:

Պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը հանդես եկավ «Երգը որպես պատմական սկզբնաղբյուր և հավաքական հիշողության կրող» դասախոսությամբ:

Նա կարևորեց երգը որպես պատմական սկզբնաղբյուր, անդրադարձավ ժողովրդի կողմից ստեղծված և հեղինակային երգի տեսակներին, ժամանակի ընթացքում դրանց՝ որպես մշակութային աղբյուրի ձևափոխմանը, աղբյուրագիտական քննադատական մեթոդներին ու հավաքական հիշողության հայեցակարգին:

Էդգար Հովհաննիսյանը հանգամանորեն խոսեց ազգային-ազատագրական պայքարի թեմաներ արտացոլող երգերի առանձնահատկությունների մասին՝ ընդգծելով, որ դրանք ձևավորվել են ավանդական-ժողովրդական, աշուղական և գրական քնարերգության հիմքի վրա:

Նա անդրադարձավ 19-րդ դարի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների շրջանի ռազմահայրենասիրական երգերին, ինչպես նաև Զեյթունի, Սասունի և ազգային-ազատագրական պայքարի դրվագների արտացոլմանը երգարվեստում:

Առաջին օրվա վերջին բանախոսը երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ Գոհար Մելիքսեթյանն էր, որի զեկուցումը վերաբերում էր Հայկական պատմական անցյալին ժողովրդական երգերում:

***Միլվա Ասրյան***

# ՀՊՄՀ պրոֆեսոր Էդուարդ Կոկանյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ ասոցացված անդամ

*ՀՊՄՀ Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Էդուարդ Կոկանյանն ընտրվել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ասոցացված անդամ՝ Քիմիական և հարակից գիտությունների բնագավառում:*

*Գիտական բարձր ճանաչումը կարևոր գնահատական է պրոֆեսոր Էդուարդ Կոկանյանի երկարամյա գիտական գործունեությանը, մասնագիտական վաստակին, գիտակրթական ոլորտներում ունեցած նշանակալի ներդրմանը:*

*Էդուարդ Կոկանյանի գիտական հիմնական ուղղություններից են բյուրեղների աճեցումն ու հետազոտումը, իսկ նրա դոկտորական ատենախոսությունը նվիրված է տարբեր բաղադրության $LiNbO_3$, $NaBi(WO_4)_2$ և $YAl_3(BO_3)_4$ բյուրեղների ստացման և ֆիզիկական հատկությունների հետազոտմանը:*

*Պրոֆեսոր Կոկանյանը նաև ղեկավարում է ՀՊՄՀ Քվանտային էլեկտրոնիկայի և ինտեգրալային օպտիկայի նոր նյութերի լաբորատորիան:*

*Էդուարդ Կոկանյանի ընտրությունը ՀՀ ԳԱԱ ասոցացված անդամ կարևոր ձեռքբերում է նաև Մանկավարժական համալսարանի համար՝ ընդգծելով բուհում գիտական ներուժի զարգացման, հետազոտական գործունեության և ակադեմիական ավանդույթների շարունակականության կարևորությունը:*

*Նշենք, որ 2009 թվականին պրոֆեսոր Էդուարդ Կոկանյանը ֆիզիկայի բնագավառում արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի՝ գիտական հոդվածաշարի համար:*

*Նա նաև գիտաչափական հեղինակավոր շտեմարաններում ամենաշատ ցիտվող հայ գիտնականներից է՝ իր գիտական հրապարակումների բարձր վկայակոչելիությամբ:*

*Շնորհավորում ենք պրոֆեսոր Կոկանյանին այս բարձր գիտական գնահատման առիթով՝ մաղթելով նրան գիտական բեղուն գործունեություն և նոր հաջողություններ գիտության ասպարեզում:*

## ՀՊՄՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ. ՋՈՒԼԻԵՏԱ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

# Կրթական ժառանգություն և ինքնության պահպանում. Ջուլիետա Գյուլամիրյանը և Սփյուռքի դպրոցների կրթական խնդիրները

Ջուլիետա Գյուլամիրյանի անունը և նրա գործունեության ուղղվածությունը պարտավորեցնում են գրել շատ խորքային և հուզական հոդված՝ շեշտը դնելով մշակութային արժեքների պահպանման կարևորության վրա:

Սփյուռքում գործող հայկական ամենօրյա և մեկօրյա դպրոցների կենսունակությունը պայմանավորված է այն գրական նյութերով և դասագրքերով, որոնք ձևավորում են սերնդի մտածելակերպը: Սփյուռքի տարբեր աշխարհագրական հատվածներում, մասնավորապես՝ Իրանի և Սիրիայի հայկական դպրոցական համակարգերում, առանձնահատուկ դեր են խաղացել այն մանկավարժները, որոնք ստեղծել են հայերենի և հայոց պատմության մասին հատուկ նյութեր: Այս շարքում առանցքային դերակատարում ունեն Ջուլիետա Գյուլամիրյանի գրչին պատկանող դասագրքերը:

Ջուլիետա Գյուլամիրյանի ստեղծագործական աշխատանքը կենտրոնացած է հայկական դպրոցների ուսումնական պլանների և սփյուռքահայ աշակերտների առանձնահատկությունների շուրջ: Նրա կողմից ստեղծված դասագրքերը միայն գիտելիքի փոխանցման միջոց չեն, դրանք նաև մշակութային կապի ամուր հիմք են: Իրանի, Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցների համար նախատեսված նյութերը հաշվի են առել տեղական կրթական համակարգերի առանձնահատկությունները՝ միաժամանակ պահպանելով հայոց լեզվի և մշակույթի մաքրությունն ու հարստությունը:

Նրա դասագրքերի առավելությունը մանկավարժական հստակությունն է և այն կապը, որն աշակերտը հաստատում է մայրենի լեզվի հետ: Գյուլամիրյանի աշխատանքը նպաստել է, որ Սփյուռքի դպրոցներում կրթությունը լինի ոչ միայն պարզապես ուսուցում, այլև դառնա ինքնության գիտակցման հենասյուն: Այսօր նրա դասագրքերը շարունակում են ծառայել որպես կրթական հենարան հայկական դպրոցների համար՝ երաշխավորելով հայկական կրթական արժեքները փոխանցումը հաջորդող սերունդներին:

Ինչպե՞ս պահպանել հայկական շունչը, երբ հայության մեծ մասը բնակվում է հայրենիքից հեռու: Պատասխանը թաքնված է դպրոցական դասագրքերի էջերում, այն բառերում, որոնք մանկիկների սրտում առաջին անգամ հայտնվում են հայերեն հնչողությամբ: Հենց այդ կարևորագույն առաքելության շուրջ է ստեղծագործել նաև Ջուլիետա Գյուլամիրյանը:

Ջուլիետա Գյուլամիրյանի անունը հավասարապես հայտնի է Իրանի և Սիրիայի, Լիբանանի և շատ համայնքների հայկական դպրոցների շրջանում: Նա հասկացել էր, որ Սփյուռքի երեխայի համար դասագիրքը պարզապես գիրք չէ. դա նրա կապն է հայոց լեզվի, պատմության և հարազատ մշակույթի հետ: Նրա ստեղծած դասագրքերը անփոխարինելի ուղեկից են հայկական դպրոցների աշակերտների համար, որոնք բացում են հայության պահպանման գաղտնիքները և հայ մնալու հրամայականը:

Նրա գրչի մեջ զգացվում են մանկավարժի հոգատարությունը և մշակութային գիտակցությունը: Նա Իրանում, Սիրիայում, Լիբանանում և Սփյուռքի բոլոր դպրոցներում սովորող երեխաների համար ստեղծել է այնպիսի նյութեր, որոնք և՛ ժամանակակից են, և՛ հագեցված են հայկական արժեքներով: Այսօր, երբ խոսում ենք Սփյուռքի կրթության մասին, չենք կարող անտեսել այն մարդկանց ներդրումը, որոնք իրենց գրքերով ուղղորդել են հայ պատանուն պահպանել սեփական ինքնությունը աշխարհի տարբեր անկյուններում:

Ստորև ներկայացնում եմ Ջուլիետա Գյուլամիրյամի գրական ժառանգության աշխարհագրությունը ըստ տարեթվերի.

Տիկին Գյուլամիրյանը դեռևս ԽՍՀՄ-ի տարիներին ստեղծել է դասագրքեր՝ «Այբբենարան» և «Մայրենի լեզու», Սովետական հանրապետություններում գործող մեկօրյա դպրոցների համար:

Այդ տարիներից մինչ օրս վերապատրաստում է Հայրենիք ժամանած սփյուռքահայ ուսուցիչներին:

Շփվելով այդ ուսուցիչների հետ՝ նա էլ ավելի լավ էր հասկանում մեկօրյա դպրոցների գերխնդիրները և ստեղծում Սփյուռքի դպրոցների պահանջներին համապատասխանող դասագրքեր:

2001թ. Համազգայինի հրավերով մեկնել է Հալեպ՝ Հայագիտական քառամյա ուսումնական հաստատությունում դասավանդելու և մանկապարտեզների ու նախակրթարանների (1-6-րդ դասարաններ) օրիորդներին վերապատրաստելու:

2003-2004 թթ. Իրանում վերապատրաստել է հայոց լեզվի ուսուցիչներին, ուսումնասիրել է գաղութը, խնդրիները, կրթության դժվարությունները, կարիքները և Համազգայինի մեկօրյա և ամենօրյա հայկական դպրոցների համար ստեղծել է 1-5-րդ դասարանների դասագրքեր: Այդ դասագրքերը մինչ օրս վերահրատարակվում են: Իրանում, Ավստրալիայում և այլուր սովորում են այդ դասագրքերով:

2006-2020 թթ. մեկ ու կես տարով հրավիրվել է Սիրիայի Հալեպ քաղաք, որտեղ վերապատրաստել է ուսուցիչներին և ստեղծել արևմտահայ նախակրթարանի «Կոկոն», «Բողբոջ», «Ծաղիկ» խմբերի համար Այբբենարաններ, 1-4-րդ դասարանների համար Մայրենիի դասագրքեր, դրանց ուղեցույցները ուսուցիչների համար: Այժմ էլ արևմտահայ Սփյուռքը այս գրքերով է ուսուցանում:

Նույնպիսի գործունեություն է ծավալել Ջուլիետա Գյուլամիրյանը Լիբանանի հայ գաղութում:

Վերապատրաստումներ է անցկացրել և դասագրքեր ստեղծել Չեխոսլովակիայի, Հունգարիայի, Ֆինլանդիայի, Հալեպի, Սիրիայի, Պարսկաստանի, Ավստրալիայի, Դուբայի, Քուվեյթի և այլ երկրներում գործող հայկական կրթաջախների համար:

Տիկին Ջուլիետա Գյուլամիրյանը այժմ ՀՀ մանկավարժական գիտությունների դոկտոր է, պրոֆեսոր, ղեկավարում է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի «Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի» ամբիոնը:

Նա Սփյուռքում միշտ զգացել է սփյուռքահայի անսահման կարոտը, նրա անկաշառ սերն ու նվիրվածությունը Հայաստանի հանդեպ: Այս խոսքերով եզրափակեց տիկին Գյուլամիրյանը ինձ հետ զրույցը. «Հերոս են բոլոր հայ ուսուցիչները, բայց երիցս կեցցե՛ն Սփյուռքի հայ ուսուցիչները, որոնք անում են անկարելին հայ մանուկներին գրել-կարդալ սովորեցնելու, հայեցի մտածողություն և հայի հոգեկերտվածք ձևավորելու համար: Նրանք լողում են փոթորկուն, ալեվետ օվկիանոսում ու փորձում են նրա փրփրուն ջրերի մեջ ապահովել մանուկների հայ մնալու անվտանգությունը»:

Հ.Գ. Ջուլիետա Գյուլամիրյամի կենսագրությանն առավել մանրամասն ծանոթանալու համար խորհուրդ ենք տալիս ընթերցել նրա «Էրգրից քշվածները» ինքնակենսագրական վիպակը:

***Լալա Սողոմոնյան***
***«Սփյուռքի դպրոց» առցանց***
***թերթի սրբագրիչ***

ՀՊՄՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

# «ԿԵՐՊԱՐՎԵՍՏԸ ԱՊՐԵԼՈՒ ԻՄ ԿԵՐՊՆ Է»

**ԼԵՄՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

*ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ*
*ՌԴ կրթության ակադեմիայի դոկտոր, պրոֆեսոր*

**-Մանկավարժականը Ձեր կյանքում. հիշո՞ւմ եք երբ և ինչպես եղավ Ձեր մուտքը այս բարձրագույն կրթօջախ:**

-Դա ինձ համար ճակատագրական էր, որովհետև ես որոշել էի ճարտարապետ դառնալ, բայց բավականին դժվարությունների հանդիպեցի... 1960-ական թվականներն էին... Ընդ որում, ես, տեխնիկումն ավարտելուց հետո, բանակում ծառայեցի, ապա դպրոցների տնօրենների հրավերով երկու տարի աշխատեցի դպրոցում: Իսկ հետո՝ 1971-1972 ուսումնական տարում, ընդունվեցի Մանկավարժական և ավարտեցի այն 1975-1976 ուստարում: Մեկ տարով ինձ գործուղեցին №118 դպրոց, և, երեք տարի աշխատելով դպրոցում, ես զգացի, որ մանկավարժությունը ամենալավ մասնագիտությունն է: Հետո ինձ նորից հետ բերեցին բուհ: Եվ սկսվեց մանկավարժական կադրեր պատրաստելու գործընթացը, որով ես ապրում եմ արդեն 52 տարի:

**- Ովքե՞ր էին Ձեզ դասավանդում և ո՞ւմ եք համարում Ձեր ուսուցիչը:**

-Ես բախտավոր ուսանող եմ եղել, որովհետև 1-ին կուրսում ինձ դասավանդել է Արտաշես Հունանյանը, որն այդ տարիներին խորհրդային շրջանի ամենալավ ակվարելիստն էր (ջրաներկով աշխատողը): Իմ ուսուցիչներն են եղել Զաքար Խաչատրյանը և Լևոն Կոջոյանը՝ երկուսն էլ հասարակության կողմից ընդունված, հետաքրքրիր նկարիչներ: Այդ նշանավոր նկարիչների հետ միասին աշխատել եմ Հայաստանից դուրս, և նրանք հետաքրքիր տողեր գրեցին իմ կյանքի պատմության մեջ: Պետք է ասեմ, որ կերպարվեստային գործունեության իմ հաջողությունը կախված է այդ երկու նշանավոր մարդկանցից:

**-Ձեր աշխատանքային գործունեության մեջ ինչ հետաքրքիր շրջափուլեր են եղել, որ կառանձնացնեիք: Ներկայացրեք դասավանդման մեթոդիկայի ձեր փորձառության ու դասագրքերի մասին:**

-Իմ աշխատանքային շրջափուլերի հիմնական բովանդակությունը թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանությունն է: Միայն նկարիչ լինելը քիչ էր ինձ համար, ես ունեի հնարավորություններ և լաբորանտ աշխատելու ընթացքում 2 ուղեցույց էի գրել, որոնք մինչև օրս օգտագործվում են:

Հետո որոշեցի թեկնածուական գրել մի ծանր շրջանում, երբ առաջինն էի, որը Հայաստանում գեղագիտական դաստիարակության վերաբերյալ թեկնածուական էր գրում: Երկու տարի չարչարվեցի գիտական ղեկավար գտնելու համար: Ի վերջո, աշխատանքս պաշտպանեցի տեսությանից՝ Արամ Բալյանի գիտական ղեկավարությամբ:

Ես հետաքրքիր կապեր ստեղծեցի Մոսկվայի մանկավարժական համալսարանի և անվանի նկարիչներ Վլադիմիր Սերգեևիչ Կուզինի, Ռոստովցև Նիկոլայ Նիկոլաևիչի հետ, որոնք խորհրդային շրջանի մեթոդիկայի նահապետներն էին: Եվ ես կարողացա այդ մեծերի հետ շփվել ու Մոսկվայում նրանց հետ ստեղծեցի բավականին շատ ծրագրեր, որոնք այսօր էլ օգտագործվում են մեր դպրոցներում: Այդ համագործակցությունն ինձ այնքան վստահություն ներշնչեց, որ ես որոշեցի դոկտորական պաշտպանել:

**- Ինչն է ընկած գեղագիտական դաստիարակության հիմքում:**

-Էլի մանկավարժությունն է. դա փիլիսոփայական տերմին է, որ օգտագործվում է մանկավարժության մեջ: Գեղագիտությունը գեղարվեստական մանկավարժության հիմքերից մեկն է, որի մեջ մտնում են գեղարվեստական բոլոր գործունեությունները:

**- Վարպե՞տ, ներկայացրեք դասավանդման մեթոդիկայի ձեր փորձառությունն ու ստեղծած ձեռնարկները:**

-Մոսկվայի համալսարանի համապատասխան ֆակուլտետի և իմ նշած երկու անհատականությունների հետ համագործակցությունն ինձ ոգեշնչեց, որ ես դոկտորական աշխատանքս պաշտպանեմ մեթոդիկայից: Եվ կարող եմ ասել հաջողեցի՝ այն պաշտպանելով 1991 թվականին: Հենց այնտեղ էլ ես մեկ տարի անց պրոֆեսոր դարձա, այնուհետև՝ 2004 թվականին, ՌԴ կրթության ակադեմիայի անդամ: Թերևս միակ հայն եմ, որ ստացել եմ այդ կոչումը:

Հարկ է նշել նաև, որ այդ տարիներին Ռուսաստանի Դաշնության հետ մեր երկրի կրթական կապերը խզվում էին, որովհետև անկախություն էինք ստացել, սակայն դա չխանգարեց ինձ հաջողության հասնել:

1992 թվականից հետո իմ բոլոր աշխատանքները վերաբերում են մեթոդիկային՝ 70 գիտական աշխատանք: Այս վերջին դասագիրքը, որ ես գրել եմ, «Կերպարվեստի ուսուցման պատմություն և տեսություն», 385 էջ, օգտակար է և՛ ուսանողների, և՛ վերապատվող ուսուցիչների և ընդհանրապես մասնագետների լայն շրջանակների համար:

Շատ կարևոր է այն փաստը, որ իմ ղեկավարությամբ 2007 թ.-ին ստեղծվել են հանրակրթական դպրոցի «Կերպարվեստ» առարկայի նոր չափորոշիչներ և ծրագրեր, 1-5-րդ դասարանների դասագրքեր, որոնք կիրառվել են մինչև 2024 թվականը: 17 տարի այդ դասագրքերը դպրոցականի սեղանին էր: Այդ դասագրքերը դեռ կիրառվում են:

**-Ինչ են գիտական կոչումները մանկավարժ գիտնականի համար:**

-Եթե դրանք աշխատանքի վաստակը բնորոշող կոչումներ են՝ շատ կարևոր են: Եթե ես այդ գիտական կոչումները չունենայի՝ վատ կզգայի, որովհետև մեթոդիկայից այդքան աշխատանքներ ունենալու դեպքում ոչնչով չէի առանձնանա, տարբերվի շատերից:

Մեր օրերում իմ ոլորտում շատ քիչ են պաշտպանություններ լինում, որովհետև գիտական ղեկավարները պետք է ունենան միջազգային հեղինակավոր պարբերականներում տպագրված հոդվածներ:

**-Տարիներ առաջ Աղավնածորի ուսումնամարզական բազայում անցկացվող պլեներներն ինչ էին տալիս պրակտիկանտերի կազմակերպման և դասախոս-ուսանող համագործակցության առումով:**

-Դա առարկա է, որի պրակտիկայի կազմակերպումը պարտադիր է ուսուցչի համար: Իհարկե, պրոֆեսիոնալ նկարիչն առանց բնության նկարել չի կարող, բայց նկարչության ուսուցչին դա շատ անհրաժեշտ էր, և՛ ծրագիր ունեինք, և՛ պայմաններ, սակայն այսօր ապագա մանկավարժ նկարիչներն այդ հնարավորությունից զրկված են: Այսօրվա կերպարվեստի առարկա դասավանդող ուսուցիչը, եթե բնության հետ չի ծանոթացել, բնություն նկարել չգիտի, հուշարձանները չի ուսումնասիրել բաց երկնքի տակ, կարելի է ասել՝ 50 տոկոսանոց ուսուցիչ է: Բոլոր թեմատիկ նկարները բնության հետ կապված խնդիրներ ունեն: Բոլոր այդ հարցերը մենք 21 օր՝ հուլիս ամսին, լուծում էինք պլեներային պրակտիկայի ընթացքում:

**- Հայաստանի բնապատկերները Ձեր կտավներից աչք են շոյում. կարծում եմ կարելի է Հայաստանի բնաշխարհին ծանոթանալ նաև Ձեր կտավների միջոցով... Բնությունը Ձեր ստեղծագործական աշխարհի տարերքն է, Ձեր հոգու մասնիկը...**

-Շարունակելով նախորդ թեման՝ մեջբերեմ մեծերի խոսքը՝ բնությունը ամենալավ ուսուցիչն է: Որովհետև բնությունը քեզ բնագիտություն է սովորեցնում, տրամադրություն է ստեղծում նկարի մեջ, երկինքն ու ամպերն ես նկարում, հողն ու ջուրը, որոնք մարդու անմիջական շփման ատրիբուտներն են: Բայց նկարչի համար առանձնապես դա շատ ավելի հետաքրքիր է: Յուրաքանչյուր մարդ տեսնում է ճամփեզրին բուսած գեղեցիկ, կապույտ ճարճատուկը: Ճարճատուկի նկարը տեսնելով՝ մարդը հետաքրքրվում է նրա բժշկական և այլ հատկություններով: Եթե նկարիչը կարողանում է ծաղկի կերպարը ճիշտ հաղորդել, ինչպես ճարճատուկինը, որը չոր ցողունի վրա է, բայց շատ գեղեցիկ ծաղիկ ուն, նրա «ուլտրամարին» գույնը պետք է ճիշտ ընտրի և մատուցի, որովհետև ուրիշ տեղ ճարճատուկ չի աճում, դա մեր երկնքի գույնն է...

**- Ձեր արվեստանոցում և ամենուր ծաղիկների պատկերներ են, այդ կտավներում՝ կակաչներ, եղրևանիներ, երիցուկներ, լավանդաներ, ջրաշուշաններ, վարդեր... Ձեր ծաղկային կտավներից սեր ու բուրմունք է ճառագում...**

-Մի հարցազրույցի ժամանակ ինձ նման հարց տվեցին, և ես ասացի՝ եթե ուզում ես տիեզերքը նվաճել՝ ծաղիկներ պիտի նկարես... Ծաղիկը տիեզերական գոյացություն է, նրա մեջ կա մարդու կերպար, և եթե ինձանից նկար են խնդրում՝ ես յուրաքանչյուրի կերպարին համապատասխան ծաղիկ եմ նվիրում:

**-Հետաքրքիր խորագրերով ցուցահանդեսներ եք ունեցել ամենատարբեր վայրերում. կպատմե՞ք դրանց մասին: Ինչպե՞ս եք ընտրում ցուցահանդեսների խորագրերը:**

-Այդ ամենն ինձ ուղղորդում է գիտությունը. եթե զբաղվում ես գիտությամբ, տեղյակ ես և՛ քաղաքականությունից, և՛ հոգևոր կյանքից. այդ բոլորը քեզ օգնում են թեմայի ընտրության հարցում: Օրինակ իմ Սյունիքի շարքը նկարելու համար ես երկու անգամ գնացել եմ Սյունիք, ոտքով շրջել եմ Տեղեր գյուղից մինչև Գորիս, Կապան, Մեղրի, Ագարակ, ապա ստեղծել իմ նկարների շարքը: Ինչո՞ւ ընտրեցի Սյունիքը, որովհետև այդ ժամանակ ամբողջ աշխարհը խոսում էր Սյունիքի մասին: Վստահ եմ, անգամ հայերի 90 տոկոսը չէր տեսել Սյունիքը: Ես այդ նկարները ցուցադրեցի նաև հրապարակում:

Վերջին տարիներին ես ցուցահանդեսներ եմ ներկայացնում ժամանակին համահունչ և համընթաց: Այդպիսի մի ցուցահանդես էր նաև «Հայաստանի հոգևոր կանթեղները» խորագրով ցուցահանդեսը, որտեղ ներկայացրի Հայաստան աշխարհի վանական համալիրները:

Ցուցահանդեսներ եմ ունեցել Ստեփանավանում, Գյումրիում: Վերջին ցուցահանդեսը Գյումրիում էր՝ «Շիրակ-Անի» խորագրով, նաև Լոռիին նվիրված ցուցահանդես եմ ունեցել: Ես Շիրակն ու Լոռին շատ եմ սիրում, որով էլ պայմանավորված են իմ ցուցահանդեսները:

**-Իսկ արտերկրում ինչ ցուցադրություններ եք ունեցել:**

-Ֆրանսիայում ունեցել եմ 5 ցուցահանդես, ընդ որում Եվրոխորհրդի հրավերով՝ 2 ցուցահանդես, մեկը՝ նվիրված էր Հայաստանին, մյուսը՝ Ստրասբուրգում, Ցեղասպանության 100-ամյակին: Պետք է նշեմ, որ վերջինս ունեցավ 30 հազար այցելու:

**-Ինչ է կերպարվեստը Ձեզ համար՝ տրամադրություն, հոգեվիճա՞կ, զբաղմո՞ւնք, ապրելու կե՞րպ... Լինո՞ւմ է, որ հոգեվիճակները կրկնվում են...**

-Այդ բոլորը մտնում է ապրելակերպի մեջ: Կերպարվեստը ապրելու իմ կերպն է: Եթե ես մեկ շաբաթ ուրիշ գործով եմ զբաղվում, հիվանդանում եմ: Այսինքն այդ զգացողությունն իմ բնավորությունն են դարձել: Իսկ երբ հիվանդ վիճակում սկսում եմ բնանկար անել՝ առողջացած վերադառնում եմ: Ես այդ երջանկությունն ունեմ, որովհետև կարողանում եմ առանց բժշկի յոլա գնալ՝ բնությունը նկարելով:

**- Ինչ դեր են խաղում գույները Ձեր առօրյայում՝ դրանք օգնո՞ւմ են ինքնադրսևորվել, ապրել, հուսադրո՞ւմ են, թե երբեմն տխրեցնում... Բնության մեջ ո՞ր գույնն եք սիրում, և որ գույնն է իշխում Ձեր գունապնակում:**

-Իմ նկարներում գերիշխում են կապույտը և մանուշակագույնը, որովհետև ես միշտ ուզում եմ բնանկարի մեջ հեռուն տեսնել, իսկ այդ երկու գույնն օգնում են ինձ պատկերել դա, ինչը շատ նկարիչների չի հաջողվում: Բոլոր դեպքերում գույնը բոլոր մարդկանց վրա դրական ազդեցություն է թողնում, նույնը երաժշտության մեջ է: Եթե ես տխուր եմ լինում, նկարներիս մեջ հակասություններն ավելի մեծ են, իսկ եթե ուրախ եմ՝ երփնագիրն ինձ մոտ ստացվում է շատ ավելի ներդաշնակ: Այո, նյարդայնացած պահերին գույների մեջ շատ հակադրություններ են լինում:

**-Որպես երկար տարիներ Մանկավարժականի տարբեր սերունդներին ուսուցանած ճանաչված պրոֆեսոր, որին իրավամբ «Վարպետ» են կոչում, ինչ հաջողություններ եք գրանցել երիտասարդ սերնդին կրթելու ասպարեզում, կբնութագրե՞ք մեր օրերի նկարիչ մանկավարժներին: Ինչ կուզեիք մաղթել նրանց:**

-Առանց թաքցնելու ասեմ, որ իմ ղեկավարությամբ բոլոր գիտական աշխատանք գրողներն առաջին հերթին նշում են, որ ես շատ լավ մանկավարժ եմ: Դա վերաբերվում է նաև իմ ուսանողներին ու շրջանավարտներին: Եվ ես շատ ուրախ եմ: Դժվար թե Հայաստանում գտնվի մեկ ուրիշը, որն ինձ նման 42 հոգու գիտության թեկնածու է դարձրել, 6 դոկտորի գիտական խորհրդատու եղել: Ինձ ղեկավար ընտրելու համար այնքան շատ են դիմում, կարծում եմ՝ դա հետաքրքիր բնորոշում է գիտնականի համար:

**- Պարոն Ներսիսյան, ամենակարևորի մասին չխոսեցինք. հոկտեմբերի 1-ին լրանում է Ձեր հոբելյանը՝ Ձեր կյանքի ութերորդ տասնամյակը: Ինչպե՞ս եք դիմավորելու:**

-Առանձնապես ոգևորված չեմ, չեմ սիրում նշել, աղմկոտ միջոցառումների կողմնակից չեմ:

**-Ուրիշ ինչի՞ մասին կուզեիք խոսել:**

-Ես կուզեի, որ հայ մարդիկ սիրեին իրար և մի քիչ հանդուրժող լինեին: Հատկապես հանրային տրանսպորտում դա նկատելի է:

Նաև կուզեի, որ ցանկացած աշխատավայրում գնահատեին մեծերի փորձառությունն ու վաստակը:

Իմ ուսանողներին ու շրջանավարտներին մաղթում եմ, որ աշխատասեր լինեն և անընդհատ գիտելիքներ ամբարեն:

**Հարցազրույցը՝ Սիլվա Ասրյանի**

## ՀՊՄՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ. ՀԵՐԻՔՆԱԶ ԽԱՉԻԿՅԱՆ

# *«Ես ուզում եմ իմաստ տալ նյութին, պատմություն թողնել նրա մեջ»,-ասում է Հերիքնազ Խաչիկյանը*

**- Հարգելի Հերիքնազ, ինչպե՞ս ընտրեցիր մասնագիտությունդ: Արդեն նկատո՞ւմ էիր սեր դեպի արվեստը: Ի՞նչը վճռորոշ եղավ: Ընտանիքիդ անդամները խրախուսո՞ւմ էին որոշումդ:**

-Եթե անկեղծ լինեմ, ես չեմ կարծում, որ արվեստն ինձ համար երբևէ եղել է պարզապես մասնագիտության ընտրություն: Այն ավելի շուտ եղել է մի բան, որ տարիների ընթացքում փոքրիկ քայլերով բացահայտել եմ ինքս ինձ համար: Մանկուց ինձ ձգում էր այն ամենը, ինչ հնարավոր էր ձեռքով ստեղծել: Սովորական առարկան ինձ երբեք միայն առարկա չէր թվում. ես դրա մեջ միշտ տեսնում էի մի ուրիշ հնարավորություն՝ ինչ կարող է դառնալ այն, եթե դրան մի քիչ սեր, երևակայություն ավելացնել: Հետո հասկացա, որ ինձ համար ստեղծելը պարզապես գեղեցիկ բան ստանալ չէ: Ես ուզում եմ իմաստ տալ նյութին, պատմություն թողնել նրա մեջ:

Իսկ ընտանիքի աջակցությունը շատ կարևոր էր: Երբ կողքիդ մարդիկ կան, որոնք հավատում են քեզ նույնիսկ այն պահին, երբ դու ինքդ դեռ վերջնականապես վստահ չես քո ճանապարհին, դա մեծ ուժ է տալիս: Բայց, ի վերջո, որոշումը ներսից էր գալիս: Կարծես մի ձայն կար, որն անընդհատ ասում էր՝ «գնա՛, սա քո ճանապարհն է»:

**-Ովքե՞ր էին քո դասախոսները համալսարանում, ի՞նչ հուշեր ունես նրանց հետ կապված: Եղե՞լ է որևէ արտառոց դիպված, որ քեզ հիասթափեցրել է կամ, ընդհակառակը, ոգևորել:**

-Համալսարանից ինձ հետ մնացել են ոչ միայն դասերը, այլև մարդկանց թողած հետքերը: Կան ուսուցիչներ, վարպետներ որոնցից գիտելիք ես ստանում, և եղել են վարպետներ, որոնք սովորեցրել են լինել իրական արվեստում, լինել պարզ մաքուր, հայեցի, մնալ մարդ բոլոր իրավիճակներում… Ինձ համար հատկապես կարևոր է եղել այն զգացումը, որ դասախոսը քեզ տեսնում է ոչ միայն որպես ուսանողի, այլ որպես ձևավորվող անհատականության: Երբ ինչ-որ մեկը քո աշխատանքի մեջ տեսնում է մի բան, որը դու դեռ ինքդ չես նկատել, դա կարող է ամբողջությամբ փոխել, բարձրացնել քո ինքնավստահությունը: Եղել են նաև պահեր, երբ քննադատությունը հեշտ չի ընդունվել: Բայց այսօր հասկանում եմ, որ երբեմն հենց այդ անհարմար խոսքերն են ստիպում քեզ ավելի խոր մտածել ու ավելի ամուր կանգնել քո ճանապարհին: Ու երևի ամենամեծ դասը սա է՝ արվեստագետը չպետք է վախենա ո՛չ քննադատությունից, ո՛չ սխալվելուց: Սխալն էլ կարող է ճանապարհ ցույց տալ: Եվ այդ սխալներն են մեզ շարունակ հղկում ու դաստիարակում, այն մարդը, որը չի ընդունում իր սխալները, դժվար էլ հաջողի…

Համալսարանում սովորելու տարիներին չեմ կարող առանձնացնել դասախոսների, որոնք ինձ ավել կամ պակաս գիտելիք են տվել, անգամ որոնք ինձ չեն դասավանդել, ես անխնա ստացել եմ բոլորից ու հասկացել, որ իրականում եթե ցանկություն կա անդադար սովորելու, ապա բոլորը պատրաստ են գիտելիք տալ քեզ, ու ես շնորհակալ եմ բոլոր այն դասախոսներին ու վարպետներին, որոնք հանդիպել են իմ ճանապարհին:

**-Ո՞ր թվականին ես ավարտել Մանկավարժական համալսարանը: Կպատմե՞ս ավարտական աշխատանքիդ մասին:**

-Մանկավարժական համալսարանն ավարտել եմ 2019 թվականին, դիպլոմային աշխատանքս եղել է գոբելեն՝ «Հայկական պար» անվանումով, ղեկավարս պրոֆեսոր Անուշ Եղիազարյանն էր, իսկ արդեն մագիստրատուրայում գիտահետազոտական աշխատանքս ղեկավարել է պրոֆեսոր Լեմս Ներսիսյանը, մարդ, որն այս ճանապարհի ամենավերջում ինձ սովորեցրեց, թե ինչպես կարելի է լինել միևնույն ժամանակ և՛ նկարիչ, և՛ թե մանկավարժ:

**-Գիտեմ, կուռմադդումների հետ աշխատանքը քո ստեղծագործական տարերքն է: Այդ մասին շատ ենք անդրադարձել մեր պաշտոնաթերթում: Մի փոքր գաղտնազերծիր՝ ինչպե՞ս են ծնվում մտահղացումներդ և ի՞նչ ճանապարհ են անցնում:**

-Կուռմադդումը ես երբեք պարզապես սովորական նյութ չեմ ընկալում: Ինձ համար ամեն ինչ սկսվում է շատ ավելի վաղ՝ սերմից: Հետո գալիս են հողը, արևը, ջուրը, սպասումը, անհանգստությունը, առաջին ծաղիկը, մեղվի այցը, առաջին պտուղը… Եվ այդ ամբողջ ընթացքը դառնում է ստեղծագործության մի մասը: Ես նույնիսկ խոսում եմ իմ կուռմադդումների հետ: Գուցե շատերին տարօրինակ թվա, բայց երբ ամեն օր խնամում ես մի բույս, հետևում նրա աճին, հասկանում նրա բնավորությունը, արդեն չես կարող նրան պարզապես նյութ համարել: Երբ այն հասունանում է, չորանում և հայտնվում իմ արվեստանոցում, ես փորձում եմ հասկանալ՝ ինչ նոր պատմություն պետք է ստեղծել: Այսինքն՝ ես կուռմադդումին չեմ պարտադրում, թե ինչ պիտի դառնա: Շատ հաճախ այն ինքն է հուշում: Հիմնականում աշխատանքներում, որոնք ծնվում են, բնությանը, էկոհամակարգին վերաբերող թեմաներն են գերիշխում, կամ պատմամշակութային արժեքներն են հյուսվում՝ մարդկանց հիշեցնելով մեր գերխնդիրների ու արժեքների մասին:

**-Տարատեսակ տիկնիկներ, զամբյուղներ, գրչատուփեր, ծաղկամաններ…Երկար կարելի է թվարկել… Կարծում եմ՝ ավելի շատ հակված ես ստեղծել գեղագիտորեն ճիշտ մատուցվող իր: Դրանցից որո՞նք են քեզ ավելի հարազատ:**

-Դժվար է առանձնացնել, որովհետև յուրաքանչյուր աշխատանք իր մեջ մի փոքրիկ պատմություն ունի: Բայց ինձ հատկապես հարազատ են այն գործերը, որոնց մեջ կուռմադդումի բնական ձևը, գույնը չի կորչում: Երբ ես տեսնում եմ նրա ձևը և հասկանում, որ բնությունն արդեն իսկ ստեղծել է այդ գեղեցկությունը, իմ գործը միայն շարունակելն է: Ինձ համար ամենահետաքրքիրն այն պահն է, երբ կուռմադդումը դադարում է պարզապես բույսի պտուղ լինելուց և դառնում է առարկա, որն ունի նոր նշանակություն: Եվ երևի ամենից հարազատ են այն աշխատանքները, որոնց մեջ ես զգում եմ իմ երկրի շունչը:

**-Բնությունը քո ներշնչանքի աղբյուրն է, բնությունից դու անընդհատ սովորում ես…Կարգախոսներ ունե՞ս…**

-Բնությունն իմ ամենամեծ ուսուցիչներից մեկն է: Կուռմադդում աճեցնելիս ես շատ բան եմ սովորել համբերության մասին: Սերմը հողի մեջ ցանելուց սկսած, այնուհետև համբերատար խնամելով՝ պետք է սպասել մինչև որ հասունանան պտուղները: Բնությունն ինձ սովորեցնում է նաև, որ գեղեցկությունը միշտ կատարյալ ձևի մեջ չէ: Երբեմն ամենագեղեցիկ կուռմադդումը հենց այն է, որն ունի փոքրիկ անհարթություն, յուրահատուկ կորություն կամ այնպիսի ձև, որը դու ինքդ երբեք չէիր կարող հորինել: Եվ ես փորձում եմ այդ դասը տանել նաև արվեստի մեջ՝ չստիպել, չկրկնել, չկեղծել: Կարծում եմ՝ բնության հետ աշխատող մարդը ժամանակի ընթացքում սկսում է ավելի ուշադիր լսել: Ես էլ սովորում եմ լսել:

**-Վերադառնանք սկզբին. Մանկավարժականի դերը քո կայացման գործում: Ի՞նչ տվեց քեզ համալսարանը, և ի՞նչ հետք թողեցիր բուհի կենսագրության մեջ:**

- Համալսարանում ուսանելու տարիներին ես ստացել եմ բոլոր այն անհրաժեշտ գիտելիքներն ու հմտությունները, որոնք հյուսելով դդմարվեստին, էլ ավելի հեշտացրին վերականգնման աշխատանքները և օգնեցին ավելի «գրագետ» ներկայացնել այն: Համալսարանում թողած ամենամեծ հետքը երևի իմ առաջին և անհատական ցուցահանդեսն է եղել, որը թե՛ ինձ համար էր կարևոր ձեռքբերում, թե՛ ներկաների համար էր հայտնագործություն, ինչպես ասում է ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը:

**Հարցազրույցը՝ Սիլվա Ասրյանի**

---

# Խաղաղության գինը

***Լրանում է աղետալի պատերազմի 6-րդ տարելիցը: Բարեբախտաբար, այսօր ունենք փխրուն կայունություն, բայց հայ ժողովրդի պատմությանը մշտապես ուղեկցող աղետի մասին մոռանալ պետք չէ: Անհրաժեշտ է հիշել հերոսացած տղաներին, ում արյան և անձնազոհության շնորհիվ այսօր մենք կանք, ապրում ենք:***

***Ստորև ներկայացնում ենք ՀՊՄՀ հեռուստառադիոլրագրության բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի Անգելինա Բաբեյանի ակնարկը, որը նա հեղինակել է 4 տարի առաջ:***

Այս տողերը գրվում են մի երկրում, որտեղ պատերազմ է, անսկիզբ ու անավարտ, որտեղ զենքերը լռել պարզապես չեն հասցնում: Որտեղ մեկ տարի առաջ դպրոցական նստարանին նստած տասնութամյա պատանին սերտում էր հայրենասիրության դասեր, իսկ այսօր կանգնած է սահմանին՝ ապացուցելու իր սերը, խիզախությունն առ հայրենիք:

Իմ երկրում տարբեր ժամանակահատվածում էլ խաղաղությունը երազանք է եղել, ու, չգիտես ինչո՞ւ, այն միշտ ուշացել է, իսկ խաղաղության գինը միայն հասկանում է պատերազմ տեսած երկիրը: Այն երկիրը, որը պատերազմի մասին լսել է երգերում, տեսել է ֆիլմերում, կարդացել է գրքերում, չի զգացել պատերազմի սարսափը՝ խաղաղության գինը հասկանալ անկարող է: Երևի իմ երկրում էլ չէին հասկանա խաղաղության գինը, եթե չլիներ պատերազմը, չլիներ 2016-ը, 2020-ը, 2022-ը: Իսկ պատերազմից հետո նրա մասին մոռանալն անհնարին է, այն դաջվում է հիշողությանդ մեջ և մոռանալ չի տալիս իր մասին:

Աշխարհում ամենասարսափելի բանը պատերազմն է, որը խլում է հազարավոր կյանքեր, արցունքով լցնում միլիոնավոր աչքեր: Իհարկե, ճիշտ է ասված՝ հպարտություն է մեռնել հանուն հայրենիքի ազատության ու անկախության, բայց ավելի մեծ հերոսություն է նրա համար ապրելը և երկիրն ապրեցնելը: Պատերազմող երկրում երեխայի համար դադարում է երազանք լինել նոր հեռախոսը, խաղալիքն ու գեղեցիկ հագուստը. նրա միակ երազանքը խաղաղությունն է…

Երանի՛ հայերս պատերազմի մասին կարդացած լինեինք միայն դասագրքերում, պատերազմ տեսնեինք ֆիլմերում, չզգայինք այն ահն ու սարսափը, որն առաջացնում է այդ ութ տառից բաղկացած անիծյալ բառը:

Իմ երկիրը հավաքական երազանք ունի՝ ամենօրյա խաղաղություն…

***Անգելինա Բաբեյան***
***Հեռուստառադիոլրագրության բաժնի 1-ին կուրս***

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԴՊՐՈՑ

# Կրթարան՝ լեցուն գիտելիքով, ջերմությամբ ու անվերջանալի բացահայտումներով

Դուք եղել եք Երևանի Ավան վարչական շրջանում գտնվող Զապել Եսայանի անվան № 180 հիմնական դպրոցում: Հավանաբար՝ ոչ: Դե ինչ, եկեք ծանոթանանք:

Սա մի դպրոց է, որտեղ ամեն օր գրվում է հաջողության նոր պատմություն: Թող անհամեստ չհնչի, բայց ուզում ենք ընդգծել, որ մեր դպրոցը հայեցի դաստիարակության կրթօջախ է,

Ինչպես յուրաքանչյուր դպրոց, մեր դպրոցն էլ կրթության, արժեքների և նոր սերնդի ձևավորման մեծ ճանապարհ է անցնում: Չորս տասնամյակից ավելի (սկզբում միջնակարգ, այժմ հիմնական) այս դպրոցը կրթում ու դաստիարակում է սերունդներ, որոնք մեծ կյանք են մտնում գիտելիքներով զինված ու մարդկային արժանապատվությամբ:

Մեր դպրոցը 2023 թվականին պաշտոնապես անվանակոչվել է նշանավոր գրող, հրապարակախոս, գրականագետ և ազգային հասարակական գործիչ Զապել Եսայանի անունով: Խիզախ հայուհու անունը դարձել է ուղենիշ մեզ համար: Մեծ պատասխանատվություն կրելով՝ սովորողները ստանձնել են Եսայանի կյանքն ու գործունեությունը ուսումնասիրելու գործընթացը: Կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ, նախագծային, հետազոտական աշխատանքներ:

Հիշարժան էր հատկապես «Ոգին չի մեռնում» խորագրով միջոցառումը. դպրոց էին «այցելել» հայոց մեծերը՝ Հովի. Շիրազը, Հ. Սահյանը, Պ. Սևակը, Ս. Կապուտիկյանը, Ե. Չարենցն ու Զ. Եսայանը:

Աշակերտների գեղեցիկ ասմունքն ու բեմական խոսքը, երգն ու պարը ջերմացրին ներկաներին: Նրանց հիշողության մեջ դեռ երկար կմնան սովորողներին ներկայացրած հայոց մեծերի, հատկապես խիզախ կնոջ՝ Զ. Եսայանի կյանքի դրվագները:

Անվանի մարդկանց հետ հանդիպումներն էլ ոչ միայն հետաքրքիր են ու տպավորիչ, այլև ոգեշնչող են և ուսանելի: Ահա «Համո Սահյան. քարափներից՝ երկինք» միջոցառմանը ներկա էր ՀՀ վաստակավոր դերասան Բաբկեն Չոբանյանը: Նա խորհուրդ տվեց Սահյանի ջերմ ու հայաստանոտ, նուրբ ու քնքուշ երգերով հղկել մեր հոգիները, մաքրագործել աշխարհը:

«Հայրենիքը սիրելու համար հարկավոր է ճանաչել այն». այս գաղափարով առաջնորդվելով՝ կազմակերպվում են էքսկուրսիաներ, այցելություններ պատմամշակութային վայրեր: Երբ սովորողը ճանաչում է իր հայրենիքի անցյալն ու ներկան, նրա սերը վերածվում է գիտակցված, պատասխանատու և արժեքավոր նվիրումի:

Ինչ խոսք, դպրոցը միայն գիտելիք փոխանցելու վայր չէ, այլ անհատի կերտման ու արժեհամակարգի ձևավորման օջախ, «այստեղից էլ՝ կրթօջախ»:

Զ. Եսայանի անունը կրող № 180 հիմնական դպրոցն այսօր վստահորեն քայլում է ժամանակակից կրթության պահանջներին համընթաց՝ պահպանելով լավագույն ավանդույթներն ու բարձր արժեքները: Այստեղ յուրաքանչյուր դասարան մի փոքրիկ աշխարհ է, որտեղ ուսուցչի նվիրումն ու աշակերտի հետաքրքրությունը հանդիպում են իրար: Անգամ անլուծելի թվացող հարցերն ու խնդիրները հարթվում են, «ես»-ը միահյուսվում է ու դառնում «մենք»: Ուսուցիչների հոգատարության ու ջերմության շնորհիվ ծնվում են նոր մտքեր ու երազանքներ, սովորողների թիմային աշխատանքը դառնում է ընկերասիրություն ու համախմբվածություն:

Մեր դպրոցի գործունեության առանցքում աշակերտակենտրոն ուսուցումն է, որտեղ գիտելիքը զուգորդվում է գործնական հմտությունների ձևավորմանը: Կիրառում ենք ինտերակտիվ մեթոդներ, լաբորատորիաներում և արհեստանոցներում տեսական գիտելիքը վերածվում է փորձի: Տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ դասերը դառնում են ուսանելի և հետաքրքիր:

Դպրոցի փորձառու ուսուցիչները սիրով կիսում են իրենց բազմամյա փորձը՝ երիտասարդ մասնագետներին փոխանցելով հմտությունները, սիրով ու նվիրումով աշխատելու կարևորությունը:

Մեր դպրոցն աչքի է ընկնում տարբեր առարկայական օլիմպիադաներում, մարզական մրցույթներում և մշակութային փառատոներում գրանցած բարձր ցուցանիշներով:

Այստեղ ամեն օր ծնվում են նոր երազանքներ, ձևավորվում են արժեքներն ու աշխարհայացքը: Այստեղ ոչ միայն ստանում են գիտելիքների հիմնարար պաշար, այլև սովորում են մտածել, ինքնուրույն որոշումներ կայացնել, հավատալ սեփական ուժերին և վստահ քայլել առաջ:

Այսօրվա դպրոցում են սովորում վաղվա շինարարն ու նկարիչը, գիտնականն ու երաժիշտը... Դրա վկայությունն են դպրոցի ցուցահանդեսները՝ «Մտքի թռիչք, ձեռքի գործ», «Սարյանական գույներ»: Հենց այստեղ են հյուսվում սովորողների մանկության ու պատանեկության վառ ու գունեղ էջերը, մարմնավորվում են հաղթանակներն ու ձեռքբերումները:

Այսօր առավել քան երբեք հարկավոր է ունենալ գիտելիքներով զինված, կարողություններով առաջնորդվող սովորողներ: Ժամանակակից դպրոցից ակնկալվում է ոչ միայն ծրագրային չափորոշիչների իրականացում, այլև սովորողի անհատական զարգացմանն ուղղված միջավայրի ստեղծում: Ահա այս նպատակին է միտված մեր մանկավարժական կազմի գործունեությունը՝ տնօրեն՝ Հայկ Բախչինյանի գլխավորությամբ:

Այո՛, այո՛, №180 հիմնական դպրոցը շարունակում է կրթել ու դաստիարակել սերունդներ, որոնք պատրաստ են դիմակայելու ժամանակակից աշխարհի մարտահրավերներին: Մեր հաջողությունների գրավականներն են սովորողների սերը, ծնողների վստահությունը և ուսուցիչների նվիրվածությունը:

Հուսով ենք, որ հնարավորինս ծանոթացաք մեր դպրոցին, իսկ այցելության դեպքում դուք կզգաք մեր ջերմությունն ու կենսասիրությունը:

***Ռուզաննա Մելիքյան***
***Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի***

## ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Լույս է տեսել ՀՊՄՀ գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցի «ՄԱՄԱԽԱԹՈՒՆ ԱՆ (ԱՌ) ԲԵՐԴԻ ՏԻՐՈՒՀԻՆ» պատմական վեպը:

Գրքի գլխավոր խմբագիրն է պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Էդիկ Գևորգյանը:

Սա պատմավեպ է՝ 13-րդ դարի մեծագույն շինարարբարերարների՝ Մամախաթուն իշխանուհու և Վաչե Վաչուտյանի գործունեության և սիրո մասին:

«Նրանք սիրել են այն իրական Հայրենիքը, որ բաժին էր ընկել իրենց, և այն ծաղկեցրել են հողաշեն շինություններով՝ պետության խորհրդանիշ Անբերդի, Կարբիի բերդերով, Աստվածընկալի, Վարդենիսի Յոթվերքի ամրոցներով, Նիգատուն, Ճանճիկ, Ճարճակես գյուղերի իջևանատներով, Հոռոմոսի գրատուն-դպրանոցով, հոգևոր մեկ տասնյակից ավելի կառույցներով, որ պարգևել են Հայրենիքին ու ժամանակին»,-գրքի նախաբանում ասում է հեղինակը՝ հավելելով՝ «Մամախաթուն պատմավեպը հիշողության կամուրջ է 13-րդ դարի, հաջորդ դարերի և ապագա դարերի միջև»:

Գրքի «Ի խորոց սրտի» ամփոփիչ խոսքում ամենայն մանրամասնությամբ հեղինակը ներկայացրել է, որ փոխարքա, զորավար, իշխանաց իշխան Վաչե Ա. Վաչուտյանի զորավարական, պետականաշինական, շինարարական, մշակութային գործունեությունը թերի կլիներ առանց կնոջ՝ Մամախաթուն իշխանուհու գործակցության:

Զաքարյան շրջանի ոչ մի ամուսնական զույգ այնպիսի միասնությամբ ու նվիրումով հանդես չի եկել, ինչպես Վաչե Ա-ն և Մամախաթունը:

Նրանք երկուսով հովանավորել են Այրարատի կողմնակալությունում Անբերդ բերդաքաղաքի վերակառուցումը, Աշտարակի, Կարբիի բերդերի, Աստվածընկալի ամրոցի, Նիգատուն, Ճանճիկ, ճարճակես գյուղերի իջևանատների, Աշտարակի ձորի, Կարբիի ձորի կամուրջների կառուցումը, Տեղերի Կաթողիկե եկեղեցու և գավիթի, Սաղմոսավանքի Կաթողիկե եկեղեցու և գավիթի, Ուշիի Կաթողիկե եկեղեցու և գավիթի, Եղիպատրուշի Սուրբ Աստվածածին Կաթողիկե եկեղեցու և գավիթի, Հովհաննավանքի Կաթողիկե եկեղեցու, Թեղենյաց վանքի առաջին և երկրորդ գավիթների, սեղանատան, կացարանների կառուցումը, Կեչառիսի Սուրբ Նշան եկեղեցու վերակառուցումը, ինչպես նաև Այրարատի կողմնակալության տարածքից դուրս կառուցել են Սանահինի մեծ գավիթը, Մակարավանքի գավիթը, Հոռոմոսի գրատուն-դպրանոցը: Նվիրատվություններ են արել մի շարք եկեղեցիների և դրանք հաստատել արձանագրություններով:

Պատմավեպում ժամանակաշրջանի պատմական փաստերը մատուցվում են գեղարվեստական գրականության՝ պատմավեպի ձևաչափով՝ ընթերցողին հետ տանելով Հայաստան աշխարհի համար պատմական հարուստ իրադարձություններով աչքի ընկնող մի շրջան, ուր իշխանավորների վարքով պայմանավորված, հայրենասիրության գաղափարն իսկական արժեք է և օրինակ՝ գալիք սերունդների համար:

Պատմավեպի լեզուն պարզ է, հեշտ ընթերցվող, ոճը՝ հետաքրքիր. հեղինակին հաջողվել է պատմական տվյալ շրջանի՝ 13-րդ դարի դեպքերն ու միջավայրը նորովի «գաղտնազերծել» ընթերցողի համար:




Ամփոփելով՝ ասենք, որ նման պատմավեպերը խիստ անհրաժեշտ են մերօրյա սերնդին՝ հայ ժողովրդի պատմության կարևոր էջերին հաղորդակցվելու և պատմական փաստերը նորովի վերլուծելու համար: Չէ՞ որ Հայրենիքը սկսվում է այն ճանաչելուց, նրա անցյալն ու ներկան կամրջելուց ու դասեր քաղելուց:

# ՈՒՍՈՒՑԻՉԸ ԶԻՆՎՈՐ Է

Աշակերտի հոգին թափանցիկ է, մտքերը պայծառ, սիրտը սիրով ու հրով լի: Ուսուցիչը հերոս է, մարդ, որն ապրում և աշխատում է նրանց համար: Նա պետք է դաստիարակի, կրթի, տա ուժ, հավատ և սեր իր աշակերտներին: Տա նրանց հոգի ու կերտի մարդ:

Բազում ուսուցիչներ եմ ունեցել՝ շատ սիրելի: Նրանցից օրինակ եմ վերցրել, հիացել եմ և ցանկացել նմանվել նրանց: Ձգտել եմ դառնալ նրանցից մեկը, համալրել նրանց շարքերը՝ շարունակելու նրանց գործը:

Այսօր ես սկսել եմ այդ ճանապարհը՝ անելով առաջին և, գուցե, ամենակարևոր քայլը՝ դարձել եմ Հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի ուսանող:

Իմ գլխավոր նպատակը մեկն է՝ կրթել սերունդ: Ակամա հիշում եմ Օ. Բիսմարկի հանճարեղ խոսքը. «Գլխավորը պատմությունը ստեղծելն է և ոչ թե գրելը»:

Ուրեմն եկեք մենք էլ լինենք այդ պատմության ստեղծողները, ձգտենք դառնալ զինվոր և իրականություն դարձնենք զինվոր կրթելու մեր ձգտումը՝ հանուն հայրենիքի: Որովհետև ուսուցիչն էլ զինվոր է, որ կրթում է ապագա մասնագետներին:

Մենք՝ ապագա մանկավարժներս, այս տարիների ընթացքում հպարտ ու վստահ առաջ կքայլենք, այս նպատակի համար կհաղթահարենք բոլոր դժվարությունները, կսովորենք, որ սովորեցնենք, մեր աշակերտներին կտանք ստեղծագործական միտք, արարելու կամք, ոգեշնչվելու թևեր: Եվ կհավատանք, որ նրանք կարող են ստեղծագործել ու հիանալ իրենց ստեղծածով՝ նկատելով գեղեցիկը և բարին:

Այս թվային դարում, զարգացմանը զուգընթաց, մարդը սկսում է կորցնել շատ բան՝ մարդկային հարաբերությունների ու շփումների գեղեցկությունը:

Այսօր, այս համալսարանի պատերի ներքո, ես սովորելու եմ ամենակարևորը՝ մարդ կերտելու արվեստը՝ սովորեցնել ստեղծել, ստեղծագործական միտք ձևավորել, թևեր պարգևել և պատրաստել թռիչքի: Որովհետև դա է ուսուցչի առաքելությունը՝ ոչ միայն ուսուցանել աշակերտներին, այլև նրանց տոգորել լուսավոր հավատով, որպեսզի երազանքների ձգտումը կարողանան դարձնել իրականություն:

Ինքս էլ պարտական եմ իմ ուսուցիչներին, որոնք՝

...Օրացույցի պես
Փոխվում են հաճախ
Ուսուցիչները ելած երթի,
Թողնելով անջինջ մի-մի հիշատակ
Թափանցիկ սրտում աշակերտի...:

Շնորհակալ եմ իմ ուսուցիչներից յուրաքանչյուրին իմ հոգում լուսավոր հետք թողնելու համար, որպեսզի ինքս էլ տարիներ հետո իմ աշակերտների հոգում կարողանամ թողնել բազում լուսավոր ու գեղեցիկ հիշողություններ:

***Մայանց Անի***
***Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ***
***Պատմության բաժնի 1-ին կուրս***

# ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ջուլիետա Գյուլամիրյանը իր ընտանեկան գրադարանից գրքերի նվիրատվություն է արել համալսարանի գրադարանին. մանկավարժական մասնագիտական գրականություն, հայ և ռուս դասականներ (արձակ և պոեզիա), հայերեն հանրագիտարան (10 հ.), մանկական հանրագիտարան (4 հ.), ռուսերեն հանրագիտարաններ, ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանների հատորներ, ընդամենը՝ 235 կտոր գիրք:

Հավելենք, որ բարձր տեխնոլոգիաների դարում գրքի նշանակությունը չի նվազել, և ժամանակն անզոր է նսեմացնելու գրքի արժեքը: Մարդկանց մի ստվար մասը դեռ ապավինում է գրքին ու նրա աղբյուրագիտական նշանակությանը, սիրում է գիրքը կարդալ՝ թերթելով...

Դեռս 2013 թվականին ՀՊՄՀ գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը գրել է բանաստեղծություն՝ «Գիրքը չի մահանա» վերնագրով, որտեղ շատ դիպուկ ու տեղին արժևորել է գրքի դերը:

**Գիրքը չի մահանա**

Գրքի մահ են գուժում
Ամեն քայլափոխի,
Ամեն խոսքի կեսը՝
Գրքի մահվան բոթ է,
Գիրն է եղել Բանը
Եվ Բանը հասել է մեզ
Կավե սալի, քարի,
Մագաղաթի, թղթի վրա,
Բանն է իշխել երեկ,
Բանն է իշխում հիմա,
Բանն է Գերագույնը,
Որ իշխելու է միշտ,
Եվ լինելու է միշտ
Եվ լինելու է միշտ
Գրքի էջի վրա...
Մահ մի գուժեք գրքին՝
Գիրքը չի մահանա...

# Երաժշտությունը՝ մթության մեջ

«ՖՐԵՍԿՈ» միջազգային ներառական փառատոնի շրջանակում անցկացված «Համերգ տոտալ մթության մեջ» միջոցառումը հետաքրքիր նորույթ էր մշակութային կյանքում: Համերգի ընթացքում դահլիճում ապահովված էր լիակատար մթություն, իսկ հանդիսատեսը հնարավորություն չուներ տեսնելու բեմը, երաժիշտներին կամ միմյանց:

Միջոցառման հիմնական նպատակն էր հանդիսատեսին հնարավորություն տալ որոշ ժամանակով զգալ այն, ինչ զգում է կույր մարդը՝ առանց տեսողության կողմնորոշվել տարածության մեջ, տեղաշարժվել և երաժշտությունն ու շրջապատի ձայները ընկալել միայն լսողության միջոցով:

Մթության պայմաններում հանդիսատեսին ուղեկցում էին հատուկ պատրաստված ուղեկցողներ: Նրանցից մեկը կույր էր: Հանդիսատեսը պետք է վստահեր ուղեկցողին և նրա օգնությամբ կողմնորոշվեր տարածության մեջ: Ոմանց համար նույնիսկ առաջին քայլերն էին անսովոր. տեսողության բացակայության պայմաններում մարդիկ սկսում էին ավելի ուշադիր լսել շրջապատի ձայները, հասկանալ դրանց ուղղությունը և զգալ իրենց կողքին գտնվող մարդկանց ներկայությունը:

Միջոցառմանը ես մասնակցեցի որպես կամավոր: Մեր աշխատանքը կապված էր նաև հանդիսատեսին մթության պայմաններում ուղեկցելու և անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու հետ: Այդ ընթացքում պարզ դարձավ, որ այն գործողությունները, որոնք սովորաբար կատարում ենք առանց մտածելու, մթության մեջ ավելի մեծ ուշադրություն են պահանջում:

Երաժշտական առումով համերգն առանձնահատուկ էր նաև նրանով, որ հանդիսատեսը նախապես չգիտեր՝ ովքեր են ելույթ ունեցողները: Բեմում Հայաստանի Ջազ նվագախումբն էր, սակայն դրա մասին հանդիսատեսը իմացավ միայն համերգի ավարտին: Մինչ այդ երաժիշտներն ու նրանց գործիքները մթության մեջ էին, և ներկաները նրանց ներկայությունը զգում էին միայն երաժշտության միջոցով:

Ջազային երաժշտությունը հնչում էր առանց բեմական լույսերի և տեսողական այլ ազդակների: Հանդիսատեսը չէր կարող տեսնել երաժիշտների շարժումները, գործիքները կամ միմյանց արձագանքը: Ուստի ուշադրությունն ամբողջությամբ կենտրոնանում էր հնչող երաժշտության վրա: Յուրաքանչյուր գործիք, ձայն և երաժշտական անցում ավելի նկատելի էր դառնում, քանի որ չկար տեսողական որևէ բան, որը կարող էր շեղել ուշադրությունը:

Համերգի ավարտին, երբ դահլիճում լույսերը վառվեցին, բացահայտվեց նաև երեկոյի երաժշտական անակնկալը. հանդիսատեսը տեսավ, որ բեմում Հայաստանի Ջազ նվագախումբն է: Այդ պահը կարևոր էր նաև այն պատճառով, որ մինչ այդ երաժիշտների մասին պատկերացումը ձևավորվել էր միայն նրանց երաժշտության միջոցով:

Այս համերգի նպատակը միայն երաժշտություն լսելը չէր: Այն հնարավորություն տվեց հանդիսատեսին մի քանի ժամով հրաժարվել տեսողությունից և փորձել հասկանալ, թե ինչպես է փոխվում շրջապատի ընկալումը, երբ հիմնական հենարանը դառնում է ոչ թե տեսողությունը, այլ լսողությունը, ձայնը և վստահությունը:

«Համերգ տոտալ մթության մեջ»-ը ցույց տվեց, որ ներառականության մասին կարելի է ոչ միայն խոսել, այլև ստեղծել պայմաններ, որոնց միջոցով մարդը սեփական փորձով կարող է հասկանալ ուրիշի առօրյան: Մթությունը ավարտվեց, լույսերը վերադարձան,

սակայն այդ փորձառությունը հնարավորություն տվեց հանդիսատեսին այլ կերպ նայել այն դժվարություններին, որոնց ամեն օր կարող են հանդիպել չտեսնող մարդիկ:

***Ելենա Սարգսյան***
***ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետ***
***Հեռուստառադիոլրագրության բաժնի 2-րդ կուրս***

# Պատրաստ եմ շարունակել իմ կտավը

Կան մարդիկ, որոնք փնտրում են իրենց ճանապարհը երկար տարիներ: Ես երջանիկ էի՝ իմը գտա դեռ մանկուց, մատիտն ու թուղթը ձեռքիս: Բայց երազանք ունենալը բավական չէ. պետք է քայլեր անես դեպի այն, նույնիսկ երբ ոտքերդ դողում են:

Արվեստի հանդեպ իմ ձգտումը սկսվել է դեռ ավելի վաղ, քան սերը դեպի նկարչությունը: Մի շրջան զբաղվում էի պարով, և թվում էր՝ դա կլինի իմ ուղին: Բայց ի վերջո հաղթեց նկարչությունը՝ իր առինքնող հմայքով քաշելով ինձ դեպի իրեն: Փոքրուց նկարել եմ սիրել, և այդ սերը, ինչպես կտավի վրա աստիճանաբար ի հայտ եկող պատկերը, ժամանակի ընթացքում ստացավ իր հստակ ուրվագիծը:

Կարծում եմ՝ կան մարդիկ, որոնց տաղանդը նկատվում է դեռ մանկուց, բայց բնատուր տաղանդը դեռ բավական չէ, և այն պետք է հղկել, աշխատեցնել: Ակադեմիական կրթությունն ունի իր ուրույն տեղն ու նշանակությունը: Հենց այդ կրթական ուղին է, որ հմուտ դասախոսների օգնությամբ հարստացնում է տաղանդը գիտելիքով և այն վերածում իսկական վարպետության:

Նկարում եմ գրեթե 6 տարի և հասցրել եմ ունենալ անհատական և խմբային ցուցահանդեսներ: Իմ անհատական ցուցահանդեսը նվիրված էր ծաղրանկարներին. այնտեղ ցուցադրվեց 125 աշխատանք: Այդ փորձառությունը միայն ամրապնդեց իմ համոզմունքը, որ պետք է շարունակեմ այս ուղին մասնագիտական կրթություն ստանալու մակարդակով:

Տարբեր բուհեր՝ տարբեր միջավայրեր, տարբեր պահանջներ, բայց ճանապարհներն ինձ բերեցին Մանկավարժական համալսարան: Իմ ուղին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ կապել էի դեռ վարժարանից և որոշեցի շարունակել այն: Ընտրելով ՀՊՄՀ կերպարվեստի բաժինը՝ ես փորձեցի միավորել երկու կարևոր բան, որոնք միշտ իմ մեջ են եղել՝ արվեստը և երեխաների հանդեպ սերը: Մանկավարժի մասնագիտությունը հենց այն հարթակն է, որտեղ այս երկուսը կարող են ապրել կողք կողքի, և ես ապագայում իմ գիտելիքներն ու սերը կկարողանամ փոխանցել երեխաներին:

Անկեղծ ասած՝ երբեք չէի մտածել դառնալ ուսուցչուհի, բայց, ի վերջո, հենց այս ուղին ընտրեցի: Ընտրեցի այն, որովհետև հավատում եմ, որ մանկավարժը կարող է ոչ միայն գիտելիք տալ, այլև բացահայտել յուրաքանչյուր երեխայի մեջ թաքնված տաղանդը՝ իր ավանդն ունենալով այնպիսի մարդու ձևավորման գործում, որը հետագայում օգտակար կլինի հասարակությանը: Ուզում եմ դառնալ ուսուցչուհի, որը կոգեշնչի աշակերտներին և կբացի նրանց առջև գիտելիքի ու արվեստի աշխարհի դռները:

Ի վերջո ամեն բան ստացվեց այնպես, ինչպես պատկերացնում էի. ես ընդունվեցի անվճար ուսուցմամբ՝ հետևում թողնելով անվստահության բոլոր պահերը, կասկածներն ու հոգնեցնող գիշերները՝ որպես անտեսանելի, բայց կարևոր շերտեր:

Այսօր, նոր կյանքի փուլի շեմին, կարծես նոր կտավի առաջ կանգնած, հույս ունեմ, որ այս տարիները կներկվեն նոր գիտելիքների, նոր ընկերությունների և հիշարժան պահերի գույներով:

Արվեստը, ինչպես կյանքը, կազմված է լույսի ու ստվերի հակադրությունից՝ դժվարություններից ու հնարավորություններից, և ես պատրաստ եմ շարունակել այս կտավը՝ մինչև վերջին վրձնահարվածը:

***Մարգարիտա Գրիգորյան***
***Գեղարվեստական կրթության ֆակուլտետ,***
***Կերպարվեստի բաժին, 1-ին կուրս***

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Լուսինե ԼԱԼԱՅԱՆԻ